ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի 2019թ-ի համայնքի ղեկավարի տարեկան

Համայնքի համայնքային բյուջեի եկամուտների և ծախսերի կատարողական՝ 2019թվականի տարեկան . առ. 01.01.2020թ.

Եկամուտների տեսակը	տարեկան պլան	1-ին կիսամյակի փաստացի կատարված
Հողի հարկ	5540,0	3269,5
Գույքահարկ	7920.0	8286,8
Վարձակալական վ/վ	2040.0	2076,5
Դոտացիա	59600.0	59600,7
Տեղական տուրքեր	70.0	75,3
Դրամաշնորհ	3966,3	3967,3
Տեղական վճարներ	2530.0	3026,8
Այլ մուտքեր		70.0
Ընդամենը վարչական բյուջե	81736.0	80373.0 կատարվել է 98.0%-ով

Վարչական բյուջեի ծախսեր.

Արմավիրի գյուղապետարանը 2019թվականի տարեկան կտրվածքով կատարել է հետևյալ ծախսերը:

1.Վճարվել է ընթացիկ աշխատավարձ 26196,3 հազ.դրամ

2.Անապահով ընտանիքների օգնության գումար է վճարվել 2330.0հազ.դրամ

3.Ծառայությունների և ապրանքների ձեռք բերում 16959,1 հազ.դրամ

4.Մանկապարտեզ 8995,0.0 հազ.դրամ

6.Արվեստի դպրոց 12866.0հազ.դրամ.

Ընդամենը ծախսեր՝ 79995,4 հազ.դրամ

Ֆոնդային բյուջեի տարեկան պլան 26193,4հազ.դրամ տարեկան կատարված 24012,3 հազ.դրամ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.Ֆ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի ղեկավարի 2019 թ-ի տարեկան հաշվետվությունը՝կայացած 06.02.2020 թ-ին.ժամը 14.00-ին:

Նախագահությամբ՝ Ռ.Մարգարյանի

քարտուղարությամբ՝ Գ. Հովհաննիսյանի

մասնակցությամբ՝

Արմավիր գյուղական համայնքի հաշվետու զեկուցմանը ներկա են գտնվում Արմավիրի մարզպետարանի ներկայացուցիչ Գ.Մելիքյանը, համայնքի ավագանու անդամները, համայնքապետարանի աշխատակազմը, համայնքի ենթակա ՀՈԱԿ-ների տնօրենները և աշխատակիցները, ինչպես նաև համայնքի մոտ 15 բնակիչներ:

Լսեցին - Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի ղեկավար՝Ռ.Մարգարյանի 2019 թվականի տարվա կատարած աշխատանքների հաշվետու զեկույցը:

Պարոն Ռ.Մարգարյանը հաշվետու զեկույցում ներկայացրեց 2019թ-ի. տարվա ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ, բյուջեի մուտքային և ծախսային կատարողականը, ինչպես նաև համայնքին վերաբերվող հիմնախնդիրների և բազմաթիվ այլ խնդիրների մասին:

<< Վարչապետի հանձնարարականի, ինչպես նաև << տարածքային կառավարման և զարգացման նախարարի հանձնարարականների, կապված <<Մաքուր Հայաստան>> գործողությունների ծրագրով նախատեսված և ղեկավարվելով <<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով, Արմավիր համայնքում իրականացվել են սանիտարական մաքրման և աղբահանության աշխատանքներ: Արմավիր համայնքում շաբաթական երկու օր համայնքի կողմից հավաքվում է բնակիչների կենցաղային աղբը և թափվում է համապատասխան աղբավայր: Արգելվել է չնախատեսված վայրերում գոմաղբի և կենցաղային աղբ թափելը: Մի քանի անգամ հիմնովին մաքրվել է Արմավիր գյուղի գերեզման տանող ճանապարհի և Արմավիր_Արևիկ տանող ճանապարհի եզրերի աղբակույտերը, բոլոր փողոցները, շրջակա տարածքները և հուշարձանները:

Արմավիր համայնքի հիմնախնդիրներից մեկը եղել է խմելու ջրի ջրամատակարարման ցանցը, որի խողովակաշարը գրեթե հիմնովին քայքայված էր, իսկ խմելու ջրի որակը ոչ պիտանի, հաճախակի էին վթարները, :

Խմելու ջրի ջրագծերի նոր ցանցի կառուցումը Արմավիր գյուղի համար հրատապ լուծում պահանջվող խնդիր է եղել, որը ներառված էր համայնքի հնգամյա զարգացման ծրագրում:

2019թվականի ընթացքում այս ծրագիրը իրականացվեց << կառավարության կողմից ֆինանսավորվող և համայնքի համաֆինանսավորմամբ երկու ծրագրերի շնորհիվ՝

Առաջինը՝ Տարածքների զարգացման հիմնադրամի և համայնքի համատեղ ֆինանսավորմամբ 38 մլն դրամ ընդհանուր արժեքով հիմնանորոգվեց շուրջ 10 կմ ջրագիծ՝ երկրորդը << կառավարության սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում, համայնքի կողմից նույնպես համաֆինանսավորմամբ՝ 21 մլն դրամ ընդհանուր արժեքով հիմնանորոգվեց 5,5 կմ ջրագիծ, ինչի արդյունքում համայնքում խմելու ջրի ջրագծերի հիմնանորոգման խնդիրը հիմնովին լուծվեց; Երկու ծրագրերում համայնքի ֆինանսական մասնակցության չափը կազմեց շուրջ 15 մլն դրամ;

2019 թվականի ընթացքում աճուրդային կարգով օտարվել են համայնքային բնակավայրային հողեր՝ 0,38 հա և 1,5 հա. գյուղ, նշանակության հողեր, որոնց վաճառքից գոյացած 6,800,0հազ դրամի .գումարը ուղղվել է ջրագծերի վերանորոգմանը:

Արմավիր համայնքի ենթակայության տակ գտնվող «Արմավիրի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ին գյուղապետարանի կողմից մայիս և հունիս ամիսների համար ֆինանսավորվել է 8995,0հազ.դրամ:

«Ֆուլետ Տնաշինական Կենտրոն» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից վերանորոգվել է մանկապարտեզի տանիքը՝ ընդհանուր 7901,0հազ.դրամ գումարի ներդրումով: Արմավիրի համայնքապետարանի կողմից վերանորոգվել է մանկապարտեզի շենքի ճակատային մասը՝ կատարվել է ավազե մաքրում, որի համար համայնքի բյուջեից ծախսվել է 210,0հազ.դրամ, ինչպես նաև մանկապարտեզի դրսի զուգարանի վերանորոգման համար ծախսվել է 316,0հազ.դրամ:

Արմավիր համայնքում գործում է Արվեստի դպրոցը, Մշակույթի տունը: Ունի դասական ոճի ըմբշամարտի թիմը, որոնք ֆինանսավորվում են համայնքի բյուջեից: Գործում են քինգ-բոքսի, և պարի խմբեր:

2019թվականի տարվա ընթացքում կատարվել են մի շարք տոններին նվիրված միջոցառումներ, որոնք են՝ հունվարի 28-ին՝ Հայկական բանակի օրվան նվիրված, մարտի 8-ից մինչև ապրիլի 7-ը՝ կանանց միամսյակին նվիրված, մայիսի 8- 9-ը և 28-ի՝ հաղթանակներին նվիրված, քաղաքացու օրվան նվիրված. սեպտեմբերի 21-ի անկախության օրվան նվիրված տոններին համայնքում կազմակերպվել է միջոցառումներ՝ որտեղ մասնակցել են համայնքի երգի և պարի ինքնագործ խմբի երեխաները, ինչպես նաև <<Արմավիրի արվեստի դպրոց>> ՀՈԱԿ-ի սաները, որոնք գեղեցիկ և բարձր մակարդակով ելույթ են ունեցել: Ամանորյա տոնի նախօրեին համայնքի 1-10տարեկան երեխաներին բաժանվել է շուրջ 450 տոնական նվերներ:

Արմավիր համայնքը ունի 3591 բնակիչներ: Համայնքի բյուջեի սոց.հատկացումների ծրագրով հատկացվել է 2,135,0հազ.դրամի օգնություն, որը հատկացվել է համայնքում ընթացիք տարում մահացած ունեցող ընտանիքներին հուղարկավորության հետ կապված ծախսերը մեղմելու և սոցիալապես անապահով՝ 70 ընտանիքներին:

2019 թվականի տարվա ընթացքում հողի հարկը հավաքագրվել է 60 տոկոսով, գույքահարկը 104 տոկոսով, տեղական տուրքերը՝ 107 տոկոսով, վարձակալական վարձավճարները՝ 100 տոկոսով: Ընդամենը համայնքի վարչական բյուջեն կատարվել է 98%ով:

Համայնքի հնգամյա ծրագրով և համայնքի տարեկան պլանով նախատեսված ծրագրերից կատարվել են մի շարք աշխատանքներ՝ խմելու ջրի ներքին ցանցի 9750մետր և 5418մետր կապիտալ կառուցում:

Տարիներ շարունակ, համայնքի հիմնախնդիրներից մեկն է եղել խմելու ջրի նոր ներքին ցանցի կառուցման, Արմավիրի մանկապարտեզի տանիքի և շենքի հիմնովին վերանորոգմանը հարցը, որը այս տարի իրագործվեց:

Համայնքի ղեկավար Ռ.Մարգարյանի հաշվետու զեկույցից հետո արտահայտվեցին համայնքի ավագանիներ՝ Իշխան Ազիզյանը, Թամարա Պողոսյանը, Գևորգ Նազարյանը և համայնքի բնակիչներ՝ Ստյոպա Հարությունյանը և Գագիկ Նավասարդյանը, որոնք նշեցին, որ 2019 թվականի տարվա ընթացքում, չնայած համայնքի բյուջեի սուղ պայմաններին, այնուամենայնիվ համայնքի ղեկավար, պարոն Ռ, Մարգարյանը ամեն կերպ աջակցում է հայնքի կարիքավոր թե, երեխաներին և, թե ընտանիքներին, և ամեն ինչ անում է, որպեսզի համայնքում նոր աշխատատեղեր ավելացվի: Ուրախալի է, որ վերջապես Արմավիր համայնքը ունեցավ խմելու ջրի նոր ներքին ցանցեր:

Հույս ունենք, որ հետագայում Արմավիր համայնքը կդառնա ավելի գեղեցիկ, զարգացած և բարեկեցիկ:

Համայնքում հողի և գույքահարկի վարձավճարները դժվարությամբ է հավաքագրվում, քանի որ համայնքի բնակիչների գրեթե 80-90տոկոսը վարկառուներ են՝ տարբեր վարկային կազմակերպություններում:

Այնուհետև խոսվեց Արմավիր համայնքի հիմանխնդիրների մասին, որոնք են՝

1.Մշակույթի տան հարակից տարացքի բարեկարգում.

1, Ճանապարհների նորոգում .

2. Արմավիրի եկեղեցու կառուցում;

Արմավիրի մարզպետարանի ներկայացուցիչ պարոն՝ Գ.Մելիքյանը հավանություն տվեց համայնքի ղեկավար՝ պարոն՝ Ռ.Մարգարյանի 2019թվականի տարեկան ներկայացրած հաշվետվությանը և հորդորեց համայնքի բնակիչներին՝ ակտիվություն ցուցաբերել սեփական մուտքերի՝ հողի հարկի, գույքահարկի, ջրի, աղբահանության վարձավճարների հավաքագրման գործընթացին, ինչը կնպաստի բյուջեի կատարմանը, որի միջոցներով կլուծվի համայնքի հիմնախնդիրները:

Համայնքի ղեկավար՝ Ռ.Ֆ.Մարգարյան

Քարտուղար՝ Գ.Մ.Հովհաննիսյան